Հավելված N 1
ՀՀ կառավարության 2010 թվականի
դեկտեմբերի 16-ի N 1660 - Ն որոշման

Ց Ա Ն Կ

<<ՁորաՀԷԿ>> ՓԲԸ-ի կողմից օտարվող գույքի

NN ը/կ	Անվանում	Չափի միավոր	Շահագործման հանձնման ամսաթիվը	Քանակ
1	2	3	4	5
	I. Շենքեր			
1	ՀԷԿ - ի շենք	հատ	1932	1
2	Նյութական պահեստ	հատ	1934	1
3	Նյութական պահեստ գլխամասային հանգույցում	հատ	1945	1
4	Դարբնոց	հատ	1937	1
5	Բրեմսբերգի շենք	հատ	1934	1
6	Գլխամասային հանգույցի արհեստանոց	հատ	1968	1
7	110կվ բաց բաշխիչ սարքավորման արհեստանոց	հատ	1940	1
8	Դրոսելային արգելափակման շենք	հատ	1934	1
9	Գլխամասային հանգույցի պահակային թիվ 2 շենք (փայտ)	հատ	1945	1
10	Տուրբինային խմբի արհեստանոց	հատ	1954	1
11	Գլխավոր հանգույցի թիվ 1 բնակելի տուն	հատ	1934	1
12	Գլխավոր հանգույցի թիվ 3 բնակելի տուն	հատ	1934	1
13	Գլխավոր հանգույցի թիվ 4 բնակելի տուն	հատ	1946	1
14	Ադմինիստրատիվ շենք թիվ 4	հատ	2006	1
15	Կայանի արտաքին էլ-կան լուսավորման համակարգ	հատ	2008	1
	Ընդամենը I			
	II. Շինություններ, Ճանապարհներ և կամուրջներ			
15	Գլխավոր հանգույցի ձախափնյա պատ	հատ	1946	1
16	Գլխավոր հանգույցի հատակային ջրատար	հատ	1932	1
17	Գլխավոր հանգույցի պարզեցման ավազան	հատ	1932	1
18	Գլխավոր հանգույցի շրջանցիկ թունել	հատ	1932	1
19	Գլխավոր հանգույցի ցանկապատ (քարե)	հատ	1941	1
20	Ճնշման թունել D3 մ	հատ	1932	1
21	Հավասարեցնող հորան	հատ	1932	1
22	110կվ բաց բաշխիչ սարքերի թեք լանջերի ամրացում	հատ	1934	1
23	Պահեստի մոտի հենապատ	հատ	1969	1
24	Կայանի հրապարակի աղբյուր-ավազան	հատ	1969	1
25	110կվ բաց բաշխիչ սարքավորման երկաթգիծ	հատ	1934	1
26	Տուրբինային ջրատար	հատ	1932	1
27	ՀԷԿ- ից մինչև հորան ճանապարհ	հատ	1953	1
28	ՀԷԿ -ի մոտի հետիոտն կամուրջ	հատ	1937	1
29	ՀԷԿ -ի մոտի ավտոճանապարհ-կամուրջ	հատ	1970	1
30	Կղմինդր	մ/ք	4/16/2008	136
31	Պրոֆ նաստիլ	մ/ք	8/22/2008	126

1	2	3	4	5
32	Ալիքավոր թիթեղ	մ/ք	8/22/2008	67.6
33	Մետաղեպլաստե խողովակ(Խմելու ջրի ջրագիծ)	մետր	8/6/2008	300
	Ընդամենը II			
III. Այլ հիմնական միջոցներ (սարքավորումներ)				
34	Տուրբինա թիվ 1	հատ	1932	1
35	Տուրբինա թիվ 2	հատ	1932	1
36	Տուրբինա թիվ 3	հատ	1947	1
37	Տուրբինա սեփական կարիքների	հատ	1930	1
38	Գեներատոր թիվ 1	հատ	1932	1
39	Գեներատոր թիվ 2	հատ	1932	1
40	Գեներատոր թիվ 3	հատ	1947	1
41	Գեներատոր սեփական կարիքների	հատ	1931	1
42	Ասինխրոն էլ.շարժիչ (Տուրբինա թիվ 1)	հատ	1946	1
43	Ասինխրոն էլ.շարժիչ (Տուրբինա թիվ 2)	հատ	1948	1
44	Ուժ.տրանսֆորմատոր ՏԴՏ 10000/110/35 (թ. 1)	հատ	1933	1
45	Ուժ.տրանսֆորմատոր ՏԴՏ 10000/110/35/US8759/47/1,4թ.	հատ	1947	1
46	Գլխ.հանգ-ի տր-տոր ե/կ-ի տր-տոր (ՌՎՍ-35, ՌԼՆ-35)	հատ	1950	1
47	Գլխ.հանգ-ի տր-տոր ե/կ-ի տր-տոր S320 100 կվտ	հատ	1950	1
48	Յուղի անջատիչ ՎՄՏ-110կվ	հատ	1995	6
49	Հոսանքի տր-տոր ՏՖԶՄ- 110/10կ	հատ	1961-1994	18
50	Լարման տրանսֆորմատոր ՆԿՖ-110կվ (կոմպլեկտ) UK	հատ	1996	6
51	Բաժանիչներ 110կվ	հատ	1947	22
52	Պարպիչներ 110կվ (կոմպլեկտ)	հատ	1947	2
53	110կվ Շինաներ Մ- 160	մետր	1947	300
54	Հողանցման բաժանիչ 110կվ (ինքնաշեն)	հատ	1950	20
55	Յուղային անջատիչ ВМ- 35կվ (կոմպլեկտ)	հատ	1935	12
56	Հոսանքի տր- տոր ՏՖՆ- 35կվ (կոմպլեկտ)	հատ	1935	12
57	Լարման տրանսֆորմատոր ԶՆՕՄ- 35կվ (2 կոմպլեկտ)	հատ	1958	6
58	35կվ բաժանիչներ ՌՎՍ-35 (2 կոմպլեկտ)	հատ	1958	38
59	35կվ պարպիչներ ՌՎՍ-35 (2 կոմպլեկտ)	հատ	1958	6
60	Հողակցող բաժանիչներ (ինքնաշեն)	հատ	1958	30
61	35կվ շինաներ Մ- 200մմ (ալյումին)	մետր	1958	200
62	Հաստատուն հոսանքի սարքավորում կոմպլեկտ (ակումուլյատոր, լիցքային սարք, վահանակ, շարժիչ, գեներատոր)	հատ	1950	1
63	Յուղային տնտեսություն	հատ	1937	1
64	Կաբելային տնտեսություն	հատ	1950	1
65	ՀԷկ-ի գլխավոր կառավարման վահան	հատ	1951	1
66	Թիվ 3 գենեատորի մեքենայական սրահի կառավարման պուլտ	հատ	1951	1
67	Թիվ 1,2 գենեատորի մեքենայական սրահի կառավարման պուլտ	հատ	1951	1
68	Սեփ. կարիք 200 կվ լարման փոփոխման հոսանքի վահան	հատ	1950	1
69	Թիվ 1 կենտրոնախույս պոմպ 15 կվտ (տուրբինային սրահում)	հատ	1967	1
70	Թիվ 2 կենտրոնախույս պոմպ 15 կվտ (տուրբինային սրահում)	հատ	1967	1
71	Թիվ 3 կենտրոնախույս պոմպ 15 կվտ (տուրբինային	հատ	1967	1

1	2	3	4	5
	սրահում)			
72	Շարժական ատամնավոր պոմպ 3 կվտ (յուղային տնտեսութ-մ)	հատ	1947	1
73	Թիվ 1 կոմպրեսոր դեմագ	հատ	1949	1
74	Թիվ 1 կոմպրեսոր դեմագ (Կապիտալիզացիա)	հատ	2008	1
75	Գլանաձև փական	հատ	1932	1
76	Բրեմմերգի վերամբարձ մեխանիկական սարքավորում (3 տն.)	հատ	1932	1
77	Շրջանցիկ հանքուղու վերամբարձ մեխանիկական սարք	հատ	1931	1
78	Գլանաձև վերամբարձ մեխանիկկան սարք	հատ	1931	1
79	Թոմսոնի կամուրջ	հատ	1951	1
80	Փոփոխական հոսանքի կամուրջ	հատ	1952	1
81	Փորձարկող տրանսֆորմատոր 6 կվտ	հատ	1955	1
82	Ազդանշանային սարք կկԽ - 5 Մ (գլխավոր վահանում)	հատ	1975	1
83	Մեգոմետր 2500 վտ	հատ	1947	1
84	Գերտաք փչման սարքավորում	հատ	1970	1
85	Էլեկտրաստուգման սարք	հատ	2008	1
86	Ուժ.տրանսֆորմատոր ՏԴՏՆ 10000/110/35 (թ. 1)	հատ	2006	1
87	Կապիտալիզացիա (Վերանորոգման աշխատանկներ])	հատ	2004	1
88	Կապիտալիզացիա (Վերանորոգման աշխատանկներ])	հատ	2005	1
89	Կապիտալիզացիա (Վերանորոգման աշխատանկներ])	հատ	2006	1
90	Կապիտալիզացիա (Վերանորոգման աշխատանկներ])	հատ	2007	1
91	Մալուխային տնտեսություն	գ/մ	4/1/2009	
92	Սղոց ձեռքի D-23620	հատ	4/1/2009	1
93	Ֆրեզ ձեռքի DW-625E	հատ	4/1/2009	1
94	Պտուտակահան գործիք	հատ	4/1/2009	1
95	ՀԷԿ-ի ԶՐՈՒ-ի մալուխներ (փոխարինում)	գ/մ	4/1/2009	
96	Զադվիշկա	հատ	7/1/2009	4
97	Մարտկոց 6Մ Տ - 190 Ա	հատ	7/1/2009	40
98	Խոզանակաբռնիչներ	հատ	7/1/2009	121
99	Մալուխային տնտեսություն	գ/մ	7/1/2009	
100	Յուղի հովացման ռադիատոր	հատ	9/1/2009	2
101	Յուղի հովացման ռադիատոր	հատ	11/1/2009	1
102	Մետաղեպլաստե խողովակ	գ/մ	8/1/2009	
103	Էլ.խոզանակ ԷԳ 16*32*40	հատ	10/28/2009	270
104	Էլ.խոզանակ ԷԳ 20*32*64	հատ	10/28/2010	180
105	Խոզանակաբռնիչներ	հատ	10/28/2010	
106	Յուղի հովացման ռադիատորի սարք	հատ	11/10/2009	1
107	Մալուխ ԿՎՎԳ 17*2.5	Գ/Մ	12/14/2009	150
108	Գեներատորի մարտկոց	հատ	6/2/2010	1
109	Էլ շարժիչ 22ԿՎ 1000պտ.	հատ	5/26/2010	1
110	35ԿՎ գծի անցում	հատ	5/11/2010	3
111	Էլ.խոզանակ ԷԳ 16*32*40	հատ	5/18/2010	455
112	Էլ.խոզանակ ԷԳ 20*32*64	հատ	5/18/2010	360
113	Էլ. գեներատոր 5ԿՎ - 3Ֆ	հատ	3/29/2010	1
	Ընդամենը III			
	IV. Արտադրական գույք			
114	Հոսանքի տրանսֆորմատոր1000/5	հատ	2003	11
115	Լարման տրանսֆոմատոր	հատ	2003	1

1	2	3	4	5
116	Լարման տրանսֆորմատոր HOM	հատ	2003	3
117	Բաժանիչ PB3	հատ	2003	2
118	Տրանսֆորմատոր HTM-6	հատ	2003	2
119	Բալզարկա	հատ	2003	1
120	Դրել	հատ	2003	1
121	Հատման հաստոց	հատ	2003	1
122	Ծալվող աստիճան	հատ	2003	1
123	Պոմպ 2к6	հատ	2003	1
124	Հրշեջ փոխորակ	հատ	2006	6
125	Կրակմարիչ - ОУ- 40	հատ	2006	7
126	Կրակմարիչ - ОВР - 100	հատ	2006	1
127	Կոմպրեսոր- 2 ՎՈՒ - 1	հատ	2006	1
128	Հրշեջ փոխորակ	հատ	7/25/2008	6
129	Կրակմարիչ ОП- 4.5	հատ	7/25/2008	5
130	Կրակմարիչ- ОУ- 5 - 2հատ, (ОУ- 2-1հատ)	հատ	7/25/2008	3
131	Կրակմարիչ- 8	հատ	7/25/2008	5
132	Կրակմարիչ- 20	հատ	7/25/2008	1
133	Կրակմարիչ- ОВР	հատ	7/25/2008	2
134	Կրակմարիչ- ОВР	հատ	7/25/2008	5
135	Էլ. շարժիչ	հատ	2006	1
136	Ավտոմատ կարգավորման պահարան	հատ	2006	1
137	Սարքերի վահանակ	հատ	2006	1
138	Վերջնական յուղաջրաանջատիչ	հատ	2006	1
139	Կոմպրեսոր	հատ	2006	1
140	Էլ. սղոց	հատ	2006	1
141	Բալզարկա	հատ	2006	1
142	Շաղափ	հատ	2006	1
143	Գազագեներատոր	հատ	2006	1
144	Տախտակամած	հատ	2006	1
145	Մարտկոց	հատ	2008	1
146	Բալզարկա	հատ	2008	1
147	Պերֆարատոր	հատ	2008	1
148	Փոշեկուլ	հատ	2008	1
149	Ավտոմատ հեռախոսակայան LG- NORTEL ARIA soho	հատ	2008	1
150	Աստիճան	հատ	7/21/2008	1
151	Կահույք	հատ	7/1/2008	1
152	Սայլակ	հատ	6/30/2008	3
153	Փչովի նավակ	հատ	10/8/2008	1
154	Հրշեջ անվտանգության պարագաներ	կոմպ	4/1/2009	1
155	Լոբզիկ	հատ	3/1/2009	1
156	Դրել	հատ	3/1/2009	1
157	Հրշեջ փոխորակ	հատ	8/1/2009	1
158	Բոր մեքենա	հատ	10/1/2009	1
159	Հրշեջ ծորակ	հատ	11/17/2009	3
160	Բենզինով խոտհնձիչ	հատ	7/13/2010	1
161	Հղկող գործիք	հատ	7/13/2010	1
	Ընդամենը IV			
V. Հաստոցներ, մեխանիզմներ				
162	Մետաղամշակման հաստոց (ՍՄ-1000)	հատ	1958	1

1	2	3	4	5
163	Սեղանի ուղղահայաց շաղափիչ հաստոց	հատ	1957	1
164	Ուղղահայաց շաղափիչ հաստոց	հատ	1957	1
165	Խառատային հաստոց 4.5կվ	հատ	1948	1
166	Ձեռքի կարապիկ	հատ	1964	1
167	Կամրջաձև ամբարձիչ (Տ-19Պ 50տ)	հատ	1930	1
	Ընդամենը V			
	VI. Տրանսպորտային միջոցներ			
168	Ավտոմեքենա ԳԱԶ - 53	հատ	1981	1
169	Ավտոմեքենա ՈՒԱԶ-396292(շարժ.N41040030076911)	հատ	2004	1
170	HOVER	հատ	2007	1
171	X - Տրիլ / Nissan /	հատ	2007	1
172	ԳԱԶ 31-02 583 /Ազդանշանային համակարգ/	հատ	2008	1
173	Հեծաններ ԳԱԶ-31-02 583-ի համար	հատ	6/1/2009	4
	Ընդամենը VI			
	VII. Տնտեսական գույք			
173	Երկաթյա դրամարկղ	հատ	1950	1
174	Տեխնիկական գրադարան	հատ	1933	1
175	Աթոռ	հատ	2004	24
176	Գրասեղան մեկ տումբա	հատ	2006	3
177	Գեղանկար	հատ	2006	2
178	Մետաղյա պահարան	հատ	2006	1
179	Գազի օջախ բալոնով	հատ	2006	1
180	Սառնարան՝ Պոլյուս՝	հատ	2006	1
181	Ծածկոց բրդյա	հատ	2006	5
182	Բարձ	հատ	2006	3
183	Դոշակ	հատ	2006	4
184	Գրադարակ	հատ	2006	1
185	Գրասեղան	հատ	2006	2
186	Գրապահարան	հատ	2006	4
187	Սեղան	հատ	2006	1
188	Տաքացուցիչ	հատ	2006	3
189	Պահեստամասեր /Անվադողեր/	հատ	2008	8
190	Ծալովի մահճակալներ	հատ	2008	6
191	Անվադողեր	հատ	2008	6
192	Սառնարան LG GR - 151	հատ	7/21/2008	1
193	Փափուկ կահույք	հատ	8/3/2008	1
194	Շերտավարագույր	ք/մ	10/11/2008	
195	Տաքացուցիչ յուղային	հատ	10/30/2008	5
196	Տաքացուցիչ	հատ	11/18/2008	4
197	Սառնարան	հատ	12/11/2008	2
198	Անվադողեր	հատ	12/10/2008	3
199	Փափուկ կահույք	հատ	12/19/2008	1
200	Հովերի անվադողեր	հատ	11/1/2009	4
201	Անվադողեր	հատ	4/1/2009	4
202	Փափուկ կահույք	հատ	7/13/2010	1
203	Լրագրասեղան	հատ	7/13/2010	1
204	Օֆիսային աթոռ	հատ	4/7/2010	2
205	Աթոռ փայտից	հատ	4/7/2010	6

1	2	3	4	5
206	Անվադողեր 225/55/R ճապոնական	հատ	3/30/2010	4
207	Յուղակայուն թերթավոր ռետին	հատ	2/18/2010	65
	Ընդամենը VII			
	VIII. Գրասենյակային սարքավորումներ			
208	Պատճենահանման սարք "Canon"	հատ	2002	1
209	Մետաղական պահարան	հատ	2002	1
210	հեռախոսաֆաքս	հատ	2004	1
211	Հեռակապի ռադիոկապ SENAU	հատ	2004	1
212	Արբանյակային ալեհավաք	հատ	2006	1
213	հեռախոս Panasonic	հատ	2006	1
214	Հեռուստացույց JVC	հատ	2006	1
215	հեռախոս Motorola	հատ	2008	1
216	հեռախոս SoniErikson	հատ	2008	1
217	հեռախոս Samsyng	հատ	2008	3
218	հեռախոս Nokia	հատ	2008	1
219	Հեռուստացույց LG RT-21FS- 7	հատ	2008	1
220	Գրասենյակային կահույք (Առվա Երկիր)	հատ	2008	1
221	հեռախոս Samsyng	հատ	2008	1
222	Մագնիտաֆոն ա/մ	հատ	8/22/2008	1
223	Բջջային հեռ. (Samsyng)	հատ	10/27/2008	3
224	Գրասենյակային կահույք (Առվա Երկիր)	հատ	11/4/2008	1
225	Հեռուստացույց-2հատ , տեսանվագարկիչ-1հատ	հատ	12/20/2008	3
226	Գրասենյակային կահույք (Երվանդ Ղազարյան)	հատ	12/18/2008	1
227	Գրասենյակային կահույք (Առվա Երկիր)	հատ	12/1/2008	1
228	Գրասենյակային կահույք (Մի Ընդ Գա)	հատ	2/1/2009	1
229	Կախիչներ	հատ	2/1/2009	7
230	Գրասենյակային կահույք	կոմպ	2/1/2009	1
231	Գրասենյակային կահույք	կոմպ	4/1/2009	1
232	Աթոռներ /պտտվող/	հատ	4/1/2009	2
233	Աթոռներ /պտտվող/	հատ	4/1/2009	10
234	Թղթապանակ կարող սարք	հատ	4/1/2009	1
235	Գրասենյակային կահույք	հատ	5/1/2009	1
236	Գրասենյակային կահույք	հատ	6/1/2009	1
237	Բջջային հեռ.	հատ	11/4/2009	1
	Ընդամենը VIII			
	IX. Համակարգչային սարքավորումներ			
238	Պրինտեռ HP-DISKET-1220 C/PS	հատ	2002	1
239	Պրինտեռ HP-LAZERJAT--1200	հատ	2002	1
240	Սկաներ	հատ	2004	1
241	Սկաներ	հատ	2004	1
242	Համակարգիչ P-4,17LCD Մանիտորով	հատ	2004	1
243	Լազերային տպիչ Canon	հատ	2004	1
244	Մոնիտոր - 17	հատ	2006	1
245	Համակարգիչ բլոկ	հատ	2006	1
246	UPS- 1200 VA E- Pro	հատ	2006	3
247	Տեսադիտարկման համակարգ/ Զվեզդա/	կոմպ	2007	1
248	Անվտանգության համակարգ/ Զվեզդա/	կոմպ	2008	1
249	Համակարգիչային տեխնիկա /ԷՖԷՄԶԵԹ/	կոմպ	2007	2

1	2	3	4	5
250	Canon / Պատճենահանող սարք /	հատ	2007	1
251	MODEM Zyxel NEO	հատ	2008	1
252	UPS- 1200 VA E- Pro	հատ	6/1/2008	1
253	Ֆլեշ	հատ	6/1/2008	4
254	Նոթբուք Toshiba Sattelite Pro A 200	հատ	2008	1
255	Համակարգիչ Intel P4-3.0 GHz /1Gb/ 160Gb/	կոմպ	2008	1
256	Համակարգչային պահեստամասեր	հատ	2008	1
257	Ֆոտոխցիկ Pentax W 30	հատ	7/29/2008	1
258	Տեսախցիկ	հատ	10/3/2008	1
259	Մոդեմ	հատ	10/22/2008	1
260	UPS	հատ	12/18/2008	1
261	Քարթրիջ	հատ	12/27/2008	1
262	Համակարգչային պահեստամասեր	կոմպ	3/1/2009	1
263	Համակարգչային պահեստամասեր	կոմպ	4/1/2009	1
264	Համակարգչային պահեստամասեր	կոմպ	4/1/2009	1
265	Համակարգիչ P-4,17LCD Մանիտորով	կոմպ	4/1/2009	1
266	Քարթրիջ գունավոր	հատ	4/1/2009	1
267	Պրինտեր	հատ	4/1/2009	1
268	Համակարգիչ Notbook Sony	հատ	4/1/2009	1
269	Համակարգիչ Notbook Sony	հատ	5/1/2009	1
270	Համակարգիչ Notbook HP	հատ	5/1/2009	1
271	Մոդեմ	հատ	4/1/2009	1
272	Համակարգչային պահեստամասեր	կոմպ	4/1/2009	1
273	Համակարգչային պահեստամասեր	հատ	5/1/2009	1
274	Սնուցման աղբյուր	հատ	5/1/2009	1
275	UPS	հատ	8/1/2009	1
276	UPS	հատ	10/1/2009	1
277	Բազմաֆունկցիոնալ սարք	հատ	10/1/2009	1
278	Համակարգչային պահեստամասեր	հատ	11/1/2009	1
279	UPS	հատ	7/30/2010	2
280	Տեսագրող պլատա	հատ	4/26/2010	1
281	Սնուցման աղբյուր	հատ	4/26/2010	1
282	Համակարգչի մայր սալիկ	հատ	3/17/2010	1
283	Համակարգչի սնուցման սարք	հատ	3/17/2010	1
	Ընդամենը IX			
Ա	**Ընդամենը՝ Հիմնական միջոցներ**			
	Հողամասեր	**3.33**		
Բ	**Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ**			
Գ	**Այլ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ, որից՝**			
	Հողամասեր			
	Լիցենզիա			
	Ընդհանուրը՝ ոչ ընթացիկ ակտիվներ (Ա+Բ+Գ)			

1	2	3	4	5
Դ	Նյութեր			
Ե	Արագամաշ առարկաներ			
Զ	Ապրանքներ			
	Ընդհանուրը՝ ընթացիկ ակտիվներ (Դ+Ե+Զ)			
	ԱՄԲՈՂՋԸ՝ ոչ ընթացիկ ակտիվներ և ընթացիկ ակտիվներ			

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2010 թվականի
դեկտեմբերի 16-ի N 1660 - Ն որոշման

Գ Ո Ւ Յ Ք Ի Ա Ռ Ո Ւ Վ Ա Ճ Ա Ռ Ք Ի
Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր

քաղ. Երևան դեկտեմբերի 2010 թ.

«ՁորաՀԷԿե փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս _ _____, որը գործում է ընկերության կանոնադրության և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի …….-ի որոշման հիման վրա, այսուհետ՝ «Վաճառողե, մի կողմից և «Ձորագետ Հիդրոե սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ի դեմս տնօրեն _____, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդե, մյուս կողմից և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ «Բաժնետերե), ի դեմս նախարար _____, որը գործում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի ….-ի թիվ …. որոշման հիման վրա, այսուհետ միասին և/կամ առանձին՝ «Կողմերե կամ «Կողմե, հիմք ընդունելով ՀՀ օրենսդրությունը կնքեցին սույն Պայմանագիրը հետևյալի մասին.

Սույն Պայմանագրում օգտագործվող հիմնական հասկացությունները՝

Գույք՝ Սույն պայմանագրի Հավելված 1-ում նշված գույք:

Անժարժ գույք՝ Հավելված 1-ում նշված շենքերը, շինությունները, հողամասերը և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն անշարժ գույք հանդիսացող գույքի այլ միավորները:

Շարժական գույք՝ Հավելված 1-ում նշված այն գույքը, որը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն չի հանդիսանում անշարժ գույք:

Փակման օր՝ սույն պայմանագրի համաձայն Գույքի ընդունման-հանձնման ակտի կնքման օրը:

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն Պայմանագրի համաձայն Վաճառողը պարտավորվում է Գնորդին որպես սեփականություն հանձնել Գույքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել Գույքը և վճարել Գույքի դիմաց՝ սույն պայմանագրով սահմանված կարգով, չափով և ժամկետներում:

2. Գույքի օտարման օրինականության, Գույքի ամբողջականության և դրա գործառնական նշանակությանը համապատասխանության երաշխիքներ և հավաստիացումներ

2.1. Վաճառողը և Բաժնետերը հավաստում և երաշխավորում են որ Գույքը Վաճառողին պատկանում է սեփականության իրավունքով:
2.2. Վաճառողը և Բաժնետերը հավաստում և երաշխավորում են, որ սույն Պայմանագիրը կնքելու պահին Վաճառողի հանդեպ սնանկության վարույթ հարուցված չէ և Գնորդին հանձնվող Գույքի նկատմամբ բռնագրավում կամ բռնագանձում չի տարածված, Գույքը որևէ հիմքով արգելադրված չէ, գրավադրված չէ և ծանրաբեռնված չէ երրորդ անձանց որևէ այլ իրավունքներով կամ ենթակա չէ նշված գործողությունների, սահմանափակումների և /կամ ծանրաբեռնման՝ օրենքի, պայմանագրի, պետական գրանցման գործողության կամ դատական կամ այլ ակտի ուժով:
2.3. Վաճառողը և Բաժնետերը հավաստում և երաշխավորում են, որ սույն Պայմանագիրը կնքելու և դրա համաձայն Գույքը օտարելու համար առկա են և ընդունվել են ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով, Վաճառողի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով պահանջվող և պարտադիր բոլոր որոշումները, համաձայնությունները և թույլտվությունները, որ սույն Պայմանագիրը ստորագրող անձինք օժտված են այն ստորագրելու պատշաճ լիազորությամբ և որ այդ անձանց կողմից սույն Պայմանագրի ստորագրումը Վաճառողի համար ստեղծում է օրինական, անպայմանական և հետագա վավերացումներ, համաձայնություններ, արտոնումներ կամ թույլտվություններ չպահանջող քաղաքացիաիրավական պարտավորություններ և պատասխանատվություն:
2.4. Սույն կետով նշված երաշխավորությունների իրականությանը չհամապատասխանելու դեպքում Վաճառողը և/կամ Բաժնետերը պատասխանատվություն են կրում սույն Պայմանագրի համաձայն:
2.5. Սույն Պայմանագրով օտարվող Գույքի կազմում հիմնական միջոցները և արտադրական հզորություն հանդիսացող Գույքի միավորները սույն Պայմանագրի կնքման պահին սարքին վիճակում են, ամբողջական են և համապատասխանում են յուրաքանչյուրը իր գործառնական նշանակությանը և լիարժեքորեն պիտանի են նման նշանակությամբ շահագործելու համար:
2.6. Բաժնետերը սույնով հավաստում և հաստատում է, որ սույն Պայմանագրի կնքման համար իր կողմից ընդունված բոլոր իրավական ակտերը հիմնվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների հիման վրա, չեն հակասում Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության և դրա իմպերատիվ նորմերի պահանջներին, Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության հետագա փոփոխությունների և/կամ լրացումների դեպքում սույն Պայմանագրի կնքման համար հիմք հանդիսացող իրավական ակտերն ենթակա չեն լինեն վերանայման, փոփոխման, վիճարկման և/կամ չեղարկման ցանկացած հիմքով:

2.7. Բաժնետերը սույնով հավաստում է, որ լավագույն ջանքերի գործադրմամբ կապահովի Հայաստանի Հանրապետության Հանրային Ծառայությունների Կարգավորող Հանձնաժողովի կողմից Գնորդի համար հաստատվող էլեկտրական էներգիայի սակագնի հաշվարկում ներդրման (Գնի) վերադարձելիությունը վեց տարվա ընթացքում՝ հաշվարկային շահույթի և մաշվածության տեսքով:

3. Գույքի փոխանցումը Գնորդին. պայմաններ, իրավական հետևանքներ և կարգ

3.1. Վաճառողը պարտավորվում է Գույքը փոխանցել Գնորդին ընդունման-հանձնման ակտով՝ ըստ Հավելված 3-ի:

3.2. Գույքը փոխանցվում է Գնորդին և 3.1. կետում նշված ակտը ստորագրվում է սույն Պայմանգրի կնքմանը հաջորդող երեք աշխատանքային օրերի ընթացքում:

3.3. Մինչև Փակման օրը Գույքը մնում է Վաճառողի տիրապետման ներքո և Վաճառողը պատասխանատվություն է կրում դրա ամբողջականության, պատշաճ վիճակի և ըստ նշանակության օգտագործելու նպատակով պիտանիության ապահովման համար՝ կրելով Գույքի վնասման կամ կորստի ռիսկը, ինչպես նաև պատասխանատվություն է կրում Գնորդի առջև Գույքը երրորդ անձանց փաստացի անօրինական տիրապետմանը անցնելու դեպքում:

3.4. Վաճառողը իրավունք ունի օգտագործել (բացառությամբ Անշարժ գույքի) Գույքը մինչև Փակման օրը:

3.5. Փակման օրվանից Գույքի շահագործմամբ արտադրված էլեկտրաէներգիան համարվում է Գնորդի սեփականությունը և Գնորդի արտադրած էլեկտրաէներգիան:

3.6. Փակման օրվանից Գույքի նկատմամբ բոլոր իրավունքները և պարտականությունները ամբողջությամբ և անպայմանականորեն անցնում են Գնորդին:

3.7. Գույքի շահագործման առնչությամբ Վաճառողի սերվիտուտային իրավունքների, ինչպես նաև Գույքի նկատմամբ երրորդ անձանց սերվիտուտային իրավունքների հետ կապված հարցերը, այդպիսիների առկայության դեպքում, կկարգավորվեն առանձին համաձայնագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Նման համաձայնագիրը կհանդիսանա սույն Պայմանագրի անբաժանելի մասը:

3.8. Գույքի հետ Վաճառողը Գնորդին է հանձնում դրա նկատմամբ սեփականության կամ այլ իրավունք հավաստող, շահագործման կանոններ և կարգ նախատեսող, տեխնիկական բնութագրիչներ և Գույքի շահագործման համար անհրաժեշտ տեղեկություններ պարունակող բոլոր փաստաթղթերը և պարագաները: Նշված փաստաթղթերի և պարագաների ցանկը կցվում է Ընդունման հանձնման ակտին որպես դրա բաղկացուցիչ մաս:

4. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ

4.1. Հաշվի առնելով, որ սույն պայմանագրի Հավելված 1-ում նշված Անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ՀՀ օրենսդրության համաձայն ծագում են պետական գրանցման պահից՝ սույն Պայմանագրի կնքմանը հաջորդող 5 օրվա ընթացքում Գնորդը դիմում է անշարժ գույքի նկատմամբ գրանցումն իրականացնող իրավասու մարմնի համապատասխան տարածքային ստորաբաժանմանը սույն պայմանագրից բխող Գնորդի սեփականության իրավունքները Անշարժ գույքի նկատմամբ գրանցելու համար: Պետական գրանցման ծախսերը կրում է Գնորդը, իսկ Վաճառողը պարտավոր է ըստ Գնորդի պահանջի իրականացնել Անշարժ գույքի նկատմամբ Գնորդի իրավունքների պետական գրանցման համար անհրաժեշտ և իրենից կախված բոլոր գործողությունները:

4.2. Անշարժ գույքի յուրաքանչյուր և բոլոր միավորների սեփականության վկայականի պատճենը, որպես սույն պայմանագրի անբաժանելի մաս կցվում են սույն պայմանագրին՝ որպես Հավելված 2:

4.3. Սույն Պայմանագրով օտարվող Անշարժ գույքի նույնականացման համար հիմք է հանդիսանում Հավելված 2-ը:

4.4. Եթե սույն Պայմանագրով օտարվող Անշարժ գույքը գտնվում է Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող հողամասերի վրա և այդ հողամասերը Վաճառողը տիրապետել է որոշակի իրավական հիմքով տրված օգտագործման իրավունքով, ապա այդպիսի Անշարժ գույքը փոխանցված է համարվում Գնորդին նշված հողամասերի նկատմամբ Գնորդի նույնական իրավունքների (անկախ իրավական հիմքից) ծագման պահից:

5. ՎՃԱՐՈՒՄՆԵՐ

5.1. Սույն Պայմանագրով Գույքի օտարման ընդհանուր արժեքը կազմում է 3 600 000 հազ. դրամ /Պայմանագրի Գին, որից 600 000 հազ. դրամը՝ ավելացված արժեքի հարկն է/ և ներառում է վաճառողին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի կադաստրային արժեքը, ընդ որում Գնորդը հողամասերի կադաստրային արժեքը փոխանցում է «Պետական սեփականություն համարվող հողի վաճառքից մուտքերե գանձապետական հաշվին:

5.2. Սույն Պայմանագրի 5.1. կետում նշված Գինը (հանած հողամասերի կադաստրային արժեքը) Գնորդը Վճարում է Փակման օրին հաջորդող 3 բանկային օրերի ընթացքում՝ Վաճառողի սույն պայմանագրում նշված բանկային հաշվին բանկային փոխանցում կատարելու միջոցով:

6. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

6.1. Վաճառողը և/կամ Բաժնետերը լիակատար պատասխանատվություն են կրում սույն Պայմանագրի 2.1-2.6 կետերում տրված երաշխիքների և հավաստիացումների խախտման, իրականությանը չհամապատասխանելու և դրանց հետևանքով Գնորդի կրած բոլոր ծախսերի և վնասների փոխհատուցման համար՝ ներառյալ բաց թողնված օգուտը:

6.2. Բաժնետերը լիակատար պատասխանատվություն է կրում սույն Պայմանագրի 2.5-2.6 կետերում տրված երաշխիքների և հավաստիացումների խախտման, իրականությանը չհամապատասխանելու և դրանց հետևանքով Գնորդի կրած բոլոր ծախսերի և վնասների փոխհատուցման համար՝ ներառյալ բաց թողնված օգուտը: Նշված պարտավորությունը մնում է ուժի մեջ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում:

6.3. Վաճառողը լիակատար պատասխանատվություն է կրում մինչև Փակման օրը Գույքի շահագործման հետևանքով կամ այդպիսի շահագործման հետ կապված ցանկացած պատճառված վնասի համար և պարտավորվում է հատուցել Գնորդի այն ծախսերը, որոնք կկրի Գնորդը բավարարելու համար այդպիսի վնասի հատուցման իրեն (որպես Գույքի սեփականատիրոջ) հասցեագրված և կատարման ենթակա պահանջները:

6.4. Կողմերի պատասխանատվության այլ հարցերը կարգավորվում են սույն պայմանագրի այլ դրույթներով և ՀՀ օրենսդրությամբ:

6.5. Վաճառողի՝ ցանկացած պատճառող և/կամ հիմքով լուծարման դեպքում սույն Պայմանագրով ստանձնած պատասխանատվությունը կրում է Բաժնետերը:

6.6. Գնորդը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներդրումային ծրագիր է ներկայացնում և ապահովում դրա իրականացումը:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺ

7.1. Սույն Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար, Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Այդուհանդերձ յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է կատարել սույն Պայմանգրի համաձայն իր պարտավորությունները անհաղթահարելի ուժի հանգամանքի ազդեցության դադարումից անմիջապես հետո:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1 Սույն Պայմանագրի կապակցությամբ Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ արբիտրաժային կարգով՝ LCIA /Լոնդոնի Միջազգային Արբիտրաժի Դատարանի/ կողմից՝ վերջինիս կանոններով և ընթացակարգով: Արբիտրները կնշանակվեն LCIA կանոնների համաձայն: Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.2 Սույն Պայմանագրի բոլոր լրացումները և փոփոխությունները կատարվում են Կողմերի փոխադարձ համաձայնությամբ գրավոր, ստորագրվում են Կողմերի կողմից և կազմում են սույն Պայմանագրի անբաժանելի մասը:

8.3 Սույն Պայմանագիրը, դրան կից Հավելվածները, սույն Պայմանագրի հիման վրա կնքված այլ պայմանագրերը, սույն Պայմանագրի լրացումները և փոփոխությունները, դրա առանձին դրույթների վրա հիմնված համաձայնությունները, դրա պայմանները որոշող այլ պայմանագրերը և համաձայնությունները, որոնց սույն Պայմանագիրը հղում է անում որպես այդպիսինի, հանդիսանում են Կողմերի հարաբերությունները կարգավորող փոխկապակցված, միմյանց բաղկացուցիչ մաս հանդիսացող և միմյանցից անօտարելի փաստաթղթեր:

8.4 Սույն Պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրման պահից և դադարում է պատշաճ կատարմամբ:

8.5 Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով 4 /չորս/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ, մեկ օրինակ մնում է այն վավերացնող նոտարական գրասենյակում:

9. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ	ԲԱԺՆԵՏԵՐ	Գ Ն Ո Ր Դ
Հասցե՝ Հ/Հ՝ ՀՎՀՀ _____	_____	Հասցե՝ Հ/Հ ՀՎՀՀ _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2010 թվականի
դեկտեմբերի 16-ի N 1660 - Ն որոշման

«ՁորաՀԷԿե ՓԲԸ-ի, «Ձորագետ Հիդրոե ՍՊԸ-ի և Հայաստանի Հանրապետության միջև _____2010թ. կնքված Գույքի Առուվաճառքի Պայմանագրի

ԳՈՒՅՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ-ՀԱՆՁՆՄԱՆ ԱԿՏ

Հայաստանի Հանրապետություն
ք. Երևան երկու հազար տաս թվականի

«ՁորաՀԷԿե փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս _____, որը գործում է ընկերության կանոնադրության և «ՁորաՀԷԿե փակ բաժնետիրական ընկերության միակ բաժնետիրոջ 2010 թվականի դեկտեմբերի …….-ի թիվ _____ որոշման հիման վրա, այսուհետ՝ «Վաճառողե, մի կողմից և «Ձորագետ Հիդրոե սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ի դեմս տնօրեն _____, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդե, մյուս կողմից (այսուհետև՝ Վաճառողը և Գնորդը միասին՝ Կողմեր) հիմք ընդունելով Կողմերի միջև 2010 թվականի դեկտեմբերի ….-ին կնքված Գույքի Առուվաճառքի Պայմանագիրը /այսուհետ. Հիմնական Պայմանագիր/. և մասնավորապես դրա 3.1-րդ կետը կնքեցին սույն Գույքի Հանձնման-Ընդունման Ակտը հետևյալ բովանդակությամբ

Վաճառող՝ …….	Գնորդ՝ …….

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

10_1660